



ԼՈՒՐԶ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԿՅԱՆՔԻՆ

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի Սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժինը 1986 թվականին լույս ընծայեց Զ. Մ. Ղասաբյանի «Ակնարկներ բուլղարահայ համայնքի պատմության» աշխատությունը: Այն ընդգրկում է բուլղարահայ համայնքի պատմությունը 1896—1970 թվականների ժամանակահատվածում: Աշխատությունը բաղկացած է 302 էջից և ունի հինգ գլուխներ.

- ա) Բուլղարահայ համայնքը 20-րդ դարի առաջին քառորդում, հայաբնակ կենտրոնները և հայերի սոցիալ-տնտեսական վիճակը.
- բ) Բուլղարահայերի հասարակական-քաղաքական կյանքը.
- գ) Բուլղարահայ գաղութի կապերը Մայր Հայրենիքի հետ.
- դ) Բուլղարահայ մշակույթը դարակերպից մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը.
- ե) 1944 թ. սեպտեմբերի 9-ի սոցիալիստական հեղափոխությունը Բուլղարիայում և բուլղարահայերի մասնակցությունը երկրի տնտեսական, քաղաքական և մշակութային վերափոխումներին:

Աշխատությունը, բացի այս հինգ գլուխներից, ունի ներածություն, վերջաբան, ամփոփում (ոուսերեն), աղբյուրներ և ծանոթագրություններ, բուլղարահայ մամուլի ժամանակագրական ցուցակ և ցանկեր:

Աշխատության ներածության մեջ հեղինակը խոսում է հայերի Բալկաններ (այժմյան Բուլղարիայի տարածք) արտագաղթի և այնտեղ հաստատվելու մասին, որը տեղի է ունեցել 6-րդ դարից սկսած,

Արշակունիների հայկական պետության գոյության դադարումից հետո: Այնուհետև հեղինակը ընդհանուր գծերով ներկայացնում է բուլղարահայ գաղութի ծաղկումը և զարգացումը մինչև 1970 թվականը:

Հեղինակը լայնորեն օգտագործել է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հիմնարար գրադարանում պահվող Ծավարշ Պոսթանճյանի, Արշակ Ալպոյաճյանի, Միհաս Թերլեմեզյանի, Գ. Պողարյանի և այլոց արխիվային ֆոնդերը, ինչպես նաև Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի, Ալեքսանդր Մյասնիկյանի անվան հանրային գրադարանի հարուստ գրականությունն ու մամուլի ժողովածուները:

Աշխատության առաջին գլխում հեղինակը լուսաբանում է Համիդյան ջարդերից հետո Թուրքիայից 20.000 հայերի հանգրվանումը Բուլղարիա և նրանց գործուն մասնակցությունը տեղի թեթև և ծանր արդյունաբերության զարգացմանը՝ հատկապես թեթև արդյունաբերության և առևտրի բնագավառներում: Բուլղար խոշոր ձեռնարկատերերի կողքին քիչ թիվ չեն կազմում նաև հայերը:

«20-րդ դարի սկզբին,—գրում է հեղինակը,—բուլղարական իշխանությունների թուլությունամբ համայնքը ձեռք բերեց ներքին ինքնավարություն (թեմական խորհուրդ՝ թեմի առաջնորդով, դատաստանական, թաղական խորհուրդներ և դպրոցական հոգաբարձություններ): Օրինակական, նոր հիմքերի վրա դրվեցին հայկական համայնքի և բուլղարական կառավարության փոխհարաբերություններն ու անմիջական կապերը» (էջ 16):

Բուլղարահայ գաղութը 1890-ական թվա-

կաններին սկսած ջանադրաբար մասնակցում է հայ ազգային-ազատագրական պայքարին՝ զինված ջոկատներ և զենք մատակարարելով: Եվ քանի որ Մակեդոնիայի և Արևելյան Թրակիայի բուլղար բնակչությունը թուրքական շարժերից փրկելու և որոշ շրջաններ երկրին միացնելու հույ՝ դարիայի ձգտումը համընկնում էր հայ ազգային-ազատագրական շարժումներին, այդ իսկ պատճառով հայերը քաջալերվում և հովանավորվում էին Ֆերդինանդ թագավորի և բուլղարական կառավարության վարչապետ Ռոդոլֆալֆի կողմից:

Աշխատության առաջին գլխում գետնելված են աղյուսակներ՝ բուլղարական վիճակագրական գլխավոր վարչության 1910, 1920, 1926 և 1934—1936 թվականների տվյալների համաձայն հույ՝ դարիայում հայերի թվի և նրանց տարբեր քաղաքներում տեղաբաշխման մասին:

Այնուհետև հեղինակը մեկ առ մեկ տեղեկություններ է տալիս հույ՝ դարիայի հետևյալ քաղաքներում հայերի հաստատվելու և նրանց տնտեսական ու մշակութային կյանքի մասին. Պոլդիվ, Վառնա, Սոֆիա, Ռուսե, հուրգաս, Հասկովո, Յամբոլ, Պագարջիկ, Սիլվեն, Շումեն, Ստարա Ջագորա, Նովա Ջագորա, Կարնոբատ, Այտոս, Սիլիենգրադ, հորիսոլգրադ, Պրովադիա, Էլհովո և այլն: Այստեղ հատկապես շեշտվում է այն փաստը, որ հույ՝ դարիայում շեքամապահության և մետաքսի արտադրության ընդլայնման գործում մեծ դեր են խաղացել Թուրքիայից տարագրված հայերը:

Կոստանդնուպոլսի 1861 թվականի Ազգային սահմանադրության հիման վրա որևէ երկրում գտնվող հայկական գաղութ, որն ունի մեկ կամ ավելի հոգևորական, մեկ կամ ավելի դպրոց ու եկեղեցի, կարող է ունենալ իր կազմավորված թեմը՝ թեմակալ առաջնորդով: Ահա այս հարցին և հատկապես բուլղարահայ գաղութում թեմ կազմելու մասին է խոսում հեղինակը աշխատության երկրորդ գլխում: Հայկական թեմ և առաջնորդարան ստեղծելու բուլղարական կառավարության պայմանները հետևյալն են.

- «1. Առաջնորդարանը պետք է հաստատվեր երկրի մայրաքաղաք Սոֆիայում:
2. հույ՝ դարահայ թեմի առաջնորդը պետք է ընտրվեր հայկական թաղական խորհուրդների ներկայացուցիչների պատգամավորական ժողովում:
3. հույ՝ դարահայ թեմի առաջնորդը պետք է լիներ հույ՝ դարիայի քաղաքացի և զբաղվեր միայն եկեղեցական հարցերով: Լինելով բուլղարահայ գաղութի պաշտոնական

ներկայացուցիչը բուլղարական կառավարության առջև, նա իրավունք չունի միջամտելու վարչական-կրթական հարցերին: Ինչպես մյուս ազգային փոքրամասնությունների կրոնական առաջնորդներին, այնպես էլ բուլղարահայ առաջնորդի համար ապահովվում էր աշխատավարձ՝ բուլղարական կառավարության կողմից» (Էջ 81):

Պատերազմական պայմանները թույլ չտվեցին առաջնորդի ընտրությունը, սակայն երկրում խաղաղություն ստեղծվելուց հետո Կոստանդնուպոլսի Պատրիարքարանը ձեռնամուխ եղավ այդ հարցի լուծմանը և որպես հույ՝ դարիայի հայոց թեմի առաջնորդ ուղարկեց Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանին, որը հաստատվեց Պոլդիվ քաղաքում: Այնուհետև բուլղարա-թուրքական հակամարտությունները խոչընդոտում են թեմի առաջնորդի հաստատումն աշխատանքին:

հույ՝ դարահայ գաղութի բարձրագույն մարմինը Հնդհանուր ժողովն էր, որը և ընտրելու էր ժամանակավոր թեմական խորհուրդ: Ժամանակավոր թեմական խորհրդի նստատեղին պետք է լիներ Սոֆիան: Թեմի առաջնորդն ընտրվում էր պատգամավորական ժողովի կողմից: Պատգամավորական ժողովը ժամանակավոր թեմական խորհրդի նախագահ ընտրեց Էմմանուել Մերահովին, իսկ անդամներ՝ Արմենակ Հակոբյանին, Անդրեաս Հակոբյանին, Թագվոր Թագվորյանին, Ստեփան Փափագյանին, Գևորգ Գույումճյանին և Գարեգին Նժդեհին: Վերջինս հետագայում հրաժարվեց Ժամանակավոր թեմական խորհրդի անդամ լինելուց:

1926 թվականի ապրիլի 10-ին թաղական խորհուրդների մասնակցությամբ հրավիրվում է բուլղարահայ պատգամավորական ժողով՝ Ժամանակավոր թեմական խորհրդի նախաձեռնությամբ, որը և ընտրում է նոր, մշտական գործող թեմական խորհուրդ և թեմակալ առաջնորդ: Մշտակա թեմական խորհրդի նախագահ է ընտրվում Էմմանուել Մերահովը, իսկ անդամներ՝ Կարո Միքայելյանը, Թագվոր Թագվորյանը, Անդրեաս Հակոբյանը, Գրիգոր Զաքարյանը, Աբրահամ Գրիգորյանը և Մկրտիչ Ներսիսյանը: Լրացուցիչ փոխարինող անդամներ են ընտրվում Ստեփան Փափագյանը, Գևորգ Գույումճյանը և Գրիգոր Ասլանյանը:

հույ՝ դարահայ թեմի թեմակալ առաջնորդ է ընտրվում Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանը, որը Նիկոմիդիայի թեմի նախկին թեմակալ առաջնորդն էր: Կ...

1922 թվականին Թուրքիայից գաղթել էր Բուլղարիա և ծառայում էր Ռուսեի հայոց Ս. Աստվածածին եկեղեցում: 1927 թվականի դեկտեմբերի 25-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն վավերացնում է Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանի ընտրությունը: Այդ ընտրությունը հաստատվում է նաև բուլղարական կառավարության կողմից:

Այնուհետև աշխատության մեջ հեղինակը տեղեկություններ է տալիս բուլղարահայ գաղութի հասարակական կազմակերպությունների մասին, ինչպիսիք են Հայրենակցական միությունները, Որբախնամ միությունները, Աղքատախնամ միությունները, Հայ բարեգործական ընդհանուր միությունը, Սպորտային-սկստական և տուրիստական միությունները, Ակումբները և այլն:

Անդրադառնում է նաև քաղաքական կուսակցություններին և նրանց գործունեությանը բուլղարահայ գաղութում (արմենականներ, սոցիալ-դեմոկրատական հնչակյան, հայ հեղափոխական դաշակցություն, ռամկալար-ազատական և բուլղարահայ կոմունիստներ): Երկրորդ գլխի վերջում հեղինակը լուսաբանում է երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին բուլղարահայերի մասնակցությունը բուլղարական հակաֆաշիստական-դիմադրական կարժմանը՝ ընդդեմ բուլղարական ֆաշիզմի և գերմանական նվաճողների:

Գրքի երրորդ գլուխն ամբողջությամբ նվիրված է բուլղարահայ գաղութի և Մայր Հայրենիքի կապերին:

Ինչպես հայտնի է, 20-րդ դարի առաջին տասնամյակներին Սփյուռքի զանազան գաղութներում ստեղծվում են Հայաստանի Օգնության Մարմիններ (ՀՕՄ): 1931 թվականին ՀՕՄ-ին փոխարինում է ՀՕԿ-ը (Հայաստանի Օգնության Կոմիտե), որի մասնաճյուղերն ստեղծվում են Սփյուռքի բոլոր գաղութներում, այդ թվում նաև Բուլղարիայում: ՀՕԿ-ի արտասահմանյան կենտրոնատեղին էր Փարիզը: ՀՕԿ-ի կենտրոնի և իր մասնաճյուղերի նպատակն էր՝ հանգանականություններից և զանազան միջոցառումներից ստացված եկամուտները տրամադրել Նորաստեղծ Սովետական Հայաստանի կառավարությանը՝ երկիրը տընտեսապես և մշակութապես ամուր հիմքերի վրա դնելու համար:

1932 թվականին բուլղարահայ գաղութում ստեղծվում է Ներգաղթի կենտրոնական հանձնախումբ՝ իր մասնաճյուղերով: Ներգաղթող բուլղարահայերի առաջին քառավանը (շուրջ 250 ընտանիք) Մայր Հայ-

րենիք է մեկնում 1933 թվականի հունվարի 14-ին: Ներգաղթը շարունակվում է նաև հետագա տարիներին:

Աշխատության հեղինակն այնուհետև խոսում է հայ-բուլղարական հասարակական-քաղաքական և մշակութային կապերի մասին: 19-րդ դարի վերջին, բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական շարժման հաղթանակից հետո, հայ-բուլղարական կապերն ավելի են ընդլայնվում: ՀՕԿ-ի և բուլղարա-սովետական միությունների ակումբ-գրադարանները վերածվում են հայ-բուլղարական մշակութային կապերի օջախների: Հատկապես բուն թափ է ստանում թարգմանական գործունեությունը: Բուլղարերեն են թարգմանվում Ռ. Պատկանյանի «Արաքսի արտասուքը», Բաֆֆու «Ջալալեդդին»-ը և այլ գործեր: Հայերեն են թարգմանվում Վ. Զլատարսկու, Յ. Իվանովի, Գ. Կացարովի և ուրիշների աշխատությունները, որոնց մեջ շուշափվում են հայ ժողովրդի պատմական ստանձին հարցեր: Հայ-բուլղարական կապերի վառ օրինակ է Պեյու Յավորովի «Հայերը» անմահ ստեղծագործությունը, որը բազմիցս թարգմանվել է հայերեն:

Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը բուլղարական մի շարք թերթեր առանձին համարներ են հատկացնում հայ ժողովրդի պատմությանը, աշխարհագրությանը, տնտեսական կյանքին ու մշակութային: Իսկ 1939 թվականի փետրվարի 18-ին «Սլովո» թերթն ամբողջությամբ նվիրվում է հայ ժողովրդի պատմական անցյալին, ճարտարապետությանը, մշակույթին և, հատկապես, բուլղարահայ կյանքին:

Աշխատության չորրորդ գլուխը ամբողջությամբ նվիրված է բուլղարահայ մշակույթին, 20-րդ դարասկզբից մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը: Այս ժամանակահատվածում բուլղարահայ գաղութում տեղի է ունենում մշակութային կյանքի աննախադեպ վերելք: Ստեղծվում են հայկական դպրոցներ, մամուլ, տպարաններ, գրադարաններ և այլն:

20-րդ դարի սկզբներին Բուլղարիայի Սոֆիա, Պլովդիվ, Վառնա, Ռուսե, Շումեն, Սիլվեն, Պազարջիկ և Բուրգաս քաղաքներում ու այլ հայաշատ վայրերում հայկական եկեղեցիներին կից գործում են տարրական դպրոց-վարժարաններ: 1903 թվականի հունվարի 1-ին Բուլղարիայում գործում էին տասը հայկական տարրական դպրոց-վարժարաններ՝ 947 աշակերտներով և 33 ուսուցիչներով: Բուլղարիայում կային նաև անհատների և կրոնական ու կուսակցական կազմակերպությունների

կողմից հիմնված հայկական դպրոցներ: Իսկ այն քաղաքներում, որտեղ հայերի թիվը փոքր էր, կազմակերպվում էին հայ երեխաներին գրագիտություն սովորեցնելու դասընթացներ:

Բուլղարահայ մշակութային զարգացման գործում մեծ դեր ունի տեղի հայ մամուլը: Բուլղարահայ առաջին թերթը («Հուլա» շաբաթաթերթ) լույս է տեսել 1884 թվականին՝ նախաձեռնությամբ և խմբագրությամբ Անդրանիկ Յոսեֆյանի: Այնուհետև հրատարակվող թերթերի թիվը հասնում է 75-ի: Բուլղարահայ մամուլի այդ առաջընթացին անտարակույս նպաստում է Կ. Պոլսից, Մոսկվայից, Թիֆլիսից, Փարիզից, Մարտելից և ԱՄՆ-ից ստացվող թերթերի և գրականության բարերար ազդեցությունը: Հեղինակն ընթերցողին է ներկայացնում բուլղարահայ թերթերը անուն առ անուն, խոսում նաև պատմական, գեղարվեստական և թարգմանական գրքերի մասին:

Բուլղարահայ տպագրական արվեստի զարգացման գործում մեծ է դերը 1895—1896 թվականների ջարդերի ժամանակ Թուրքիայից Բուլղարիա ապաստանած Երվանդ Փալաքաշյանի: Նա Թուրքիայից իր հետ Բուլղարիա էր բերել տպագրական տատեր ձուլելու աշխատանոցը, որը և հիմք հանդիսացավ Բուլղարիայում հայկական տպագրական գործի ծավալմանը:

1888 թվականին Պոլսից հիմնադրվում է բուլղարահայ առաջին «Գրասիրաց եղբայրություն» գրադարանը: Այնուհետև Բուլղարիայի տարբեր քաղաքներում ըստեղծվում են նոր գրադարաններ և ակումբներ, որոնք մեծ դեր են խաղում հայապահպանման գործում: Այդ գրադարաններում և ակումբներում կարդացվում են դասախոսություններ հայոց պատմության, տոմարագիտության և այլ թեմաների շուրջ, կազմակերպվում են հատուկ դասընթացներ՝ հայերի շրջանում անգրագիտությունը վերացնելու համար:

1880-ական թվականներին Թումենի հայկական դպրոցի տնօրեն Տաճատ Պեչկերյանը աշակերտության ուժերով ստեղծում է ինքնագործ թատերախումբ, որը 1900 թվականին, Արշակ Ծալճյանի և Գրիգոր Դավիթյանի գլխավորությամբ, դառնում է կիսավրոֆեսիոնալ թատերական միություն՝ «Արարատ» անվանումով: Նման ինքնագործ թատերախումբեր են ստեղծվում նաև Բուլղարիայի այլ քաղաքներում՝ Պոլսից, Վառնայում, Սոֆիայում, Ռուսեում և այլ վայրերում: Բեմադրվում են «Վարդան Մամիկոնյան», «Վահան Մամիկոն-

յան», «Արշակ Երկրորդ», «Ջալալեդդին», «Զեյթունի ապստամբությունը» և այլ թատերգություններ: Այս ինքնագործ թատերախումբերի նպատակն էր՝ բուլղարահայ աշխատավորական լայն զանգվածներին ջամբել հայրենասիրություն, ազգային-ազատագրական նվիրական գործին՝ արթուն պատրաստակամություն: Բուլղարահայ թատերական արվեստը նոր թափ է ստանում, երբ Մայր Հայրենիքից և Սփյուռքի այլ գաղութներից թատերախմբեր և կամ անհատ կատարողներ ելույթ են ունենում բուլղարահայ բեմում:

Բուլղարահայ գաղութում թատերական արվեստին զուգահեռ մեծ թափ է ստանում երաժշտական արվեստը: Հանդես են գալիս անհատ կատարողներ, ստեղծվում են երգչախմբեր, մի շարք գործիքային նվագախմբեր: 1881 թվականի ապրիլին Ծումենում հիմնվում է հայկական առաջին նվագախումբը՝ Միքայել Ծաֆրանի ղեկավարությամբ:

1905 թվականին Պոլսից «Վահան Մանուելյան» գեղարվեստասիրաց միությանը կից հիմնվում է գեղանկարչության խմբակ, որտեղ սովորում են հայ պատանիներ և երիտասարդներ: Պարբերաբար կազմակերպվում են ցուցահանդեսներ: Ընդհանուր երիտասարդները կերպարվեստի և գեղանկարչության մեջ կատարելագործվելու համար ուսանելու են մեկնում Արևմտյան Եվրոպա, Ռուսաստան և Բուլղարիայի կերպարվեստի և գեղանկարչության ինստիտուտներ:

Արվեստների զարգացումը բուլղարահայ գաղութում անձխտելի խթան է հանդիսանում նաև բուլղարական արվեստների զարգացման գործին:

Աշխատության հինգերորդ գլխում հեղինակը խոսում է 1944 թվականից հետո երկրի տնտեսական վերափոխման, ժողովրդական իշխանության և այլ տնտեսական ու քաղաքական հարցերի մասին: Այնուհետև հեղինակը տեղեկություններ է տալիս բուլղարահայերի ներգաղթի, սովետա-բուլղարական փոխհարաբերությունների ընդլայնման և բուլղարահայ գաղութի ու Սովետական Հայաստանի կապերի հետագա զարգացման մասին:

Զ. Մ. Ղասաբյանի «Ակնարկներ բուլղարահայ համայնքի պատմության» աշխատությունը լուրջ ներդրում է սփյուռքահայ կյանքի ուսումնասիրման գործում:

ՎՈՒՈՂՅԱ ԱՐԱՔԱՄՅԱՆ